

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 1-ին և 2-ին, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Եթովպիայի Ֆույր Եկեղեցու պատվիրակությունը: Պատվիրակության կազմի մեջ էին Գոնդարի Պետրոս արքեպիսկոպոսը, Ադուայի Ամենասուրբ Երրորդության վանքի վանահայր Մելաքե Բերհանատ Վոլդե Հավարիատ վարդապետը, Ադդիս-Աբեբայի Աստվածաբանական դպրոցի դիրեկտոր պր. Սամվել Տերրեֆեն և Ադդիս-Աբեբայի համալսարանի փիլիսոփայության և կրթության դասախոս դոկտ. Էզուալե Գաբրե-Խռիստին:

Պատվիրակության ուղեկցում էր Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքարանի ներկայացուցիչ Հայր Ֆիլարետը:

Հյուրերը ջերմորեն ընդունվեցին Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռի միաբանության կողմից:

Պատվիրակությունը հուլիսի 2-ին, կիրակի օրը, ներկա եղավ Մայր Տաճարում սուրբ պատարագին, որից հետո Վեհարանում ի պատիվ հյուրերի տրվեց հաշկերույթ:

Հյուրերը այցելեցին մի շարք պատմական վանքեր և ծանոթացան Երևանի տեսարժան վայրերին:

Հուլիսի 3-ին պատվիրակությունը մեկնեց Մոսկվա:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

3 հուլիսի 1961 թ.
Ս. Էջմիածին